

ԿՈՍԻՏԱՍ ԿԱՐԴԻՆԵՏ



ՆԱՐԵՐԳ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Իր Մօր Մաղրանքը

Քիչը տեսէ՛ր իմ հոգորդի,
 Դեռ քիչ և քիչ սիրայելի,
 Զայն և մայրս քու որդե՛ս,
 Քիչը՝ լիքիւ սիրայելի:
 Ախ՛, թախա՛ւ Դեռ քիչ տարակոյ,
 Եւ մայրս քու՝ Դեռ քիչ սիրայելի,
 Քիչը տեսէ՛ր իմ հոգորդի,
 Դեռ քիչ և քիչ սիրայելի:

Գրող՝ Կարդինուս



ՊՐԱՆՈՇ Արատահման՝ ԿԵՍ ԵՍԻՄ

891.99

4-68

891-99
4-68

6 NOV 2011

«ՄՇԱԿՈՅԹ» Հրատարակչական Մատենաշար Թ. 10

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ք ՆԱՐԵՐԳՈՒԹՒՒՆՆԵՐ

Ներածութիւն՝ Թ. ԱԶԱՏԵԱՆԻ



«ՄՇԱԿՈՅԹ» Գրաստու

Պիլլոր Սօգազ Կիւլ Խան Թ. 8-9

Կալաթա — ԻՍԹԱՆԳՈՒԼ

1939



23 MAY 2013

26385

Այս հատորին կողքը գեղազրած է մանրանկարիչ Պ.
Ֆիլիփ Երմոզեան: Քիչէները պատրաստուած են «Թա-
ն»ի քիչէի արուեստանոցին մէջ Պ. Վահան Ազատեանի
եւ Պ. Նեւոնի Գարակիլեանի կողմէ: Գրաշարութիւնը
ըրած է Պ. Բերովէ Եփեսացեան:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱԿՈԲ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ
Անգարա հատուկի
Րէշիտ էֆ. Խան Թ. 14
ԻՍԹԱՆԳՈՒԼ



2600-79





ԿՈՐԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ (անկողնական կաթողիկոս) գեղարվեստի մեջ

Կոմիսսար Վարդապետի ծննդեան 60 ամեակին առթիւ, երբ, 1931ին, անոր կեանքին ու երաժշտական գործունեութեան նուիրուած աշխատասիրութիւնս լոյս տեսաւ հոս, մտադիր էի անշատ-




ԿՈՐԻՏԱՍ ՎՐԴ. 1908ին

բար առանձին հաստի մը մեջ խմբել նաեւ տարաբաշտ վարպետներ հրատարակուած եւ անխաղաղ արտադրութիւնները (Հայ գեղջուկ երաժշտութեան մասին զանազան տեսութիւններ, երաժշտագիտական յոդուածներ, բանաստեղծութիւններ, մտածումի փորձանքներ, ելն.): Պրպտումներու ընթացքին յաջողած էի ձեռք բե-

րել Հայ Գեղջուկ երաժշտութիւն ընդհանուր խորագիրը կրող երկասիրութեան կարեւոր մասերը (նուագական երաժշտութիւն, ժողովրդական եղանակներու ծաւալումն ու զարգացումը, — երգաս-

սելծութիւն եւ երգեցողութիւն, հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտութեան յասկանիւթները, օտար երաժշտութեանց ազդեցութիւնը հայ եկեղեցական եւ աշուղական երաժշտութեան վրայ, ամանակ, վանկաչափութիւն, եւն.) եւ հայ եկեղեցւոյ առողջանութեան նշաններու սիսդեմին վերաբերեալ բանախօսութիւն մը, որոնք կորսուած կը կարծուէին (*):



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
(աշխարհական տարագրով)

հնարաւորութիւններ կային մասնագիտական բովե մը անցընելու եւ կորուստ վերջելու զանոնք:

(*) Այս երկու անտիպ ու թերաւարտ աշխատութիւնները մաս առ մաս լոյս տեսան Ա. Զօպանեանի «Անահիտ» հանդէսին մէջ (1935-37):

Կոմիտասեան ձեռագիրներու խումբէն անշատեցի միայն ինքնագիր ոսանաւորներու տեսակ մը, որուն կողին վրայ «Սեւագրութիւնք» մականագրութիւնը կար: Արդարեւ, Կոմիտաս Վրդ. ասէն չէր ունեցած իր ամբողջութեանը մէջ հրատարակելի վիճակի մը մէջ դնելու այդ օտարագրութիւնները: Մեծ մասը, մասիսով եւ արագօրէն նետուած բուլբին, դժուար ընթեռնելի, զանազան փոփոխութիւններ ու սրբագրութիւններ կրած, կը կարօտէր ուշադիր վերաքննութեան մը: Առանց բառ մը, երանգ մը կորսնցնելու հարազատութենէն, իրենց անբերի դիմագծութեամբը պէտք էր զանոնք ընդօրինակել ու Տպագրութեան յանձնել (*):

Նկատելի պարագայ մըն էր ձեռագրին անթուական ըլլալը: Ն՞րք գրի առնուած էին այդ փերթուածները: Անոնցմէ հրատարակուածներ կային: Հետաքրքրութիւնս մասամբ գոհացում գտաւ, երբ Թեոդիկի 1911ի տարեցոյցին մէջ Օրիորդի մը ալպօմէն արտագրուած տեսայ Կոմիտաս Վրդ.ի գողցրիկ եւ զգայուն մէկ ոսանաւորը (Աշուն Օր), որուն ներքեւը կար 1905 թուականը: Հ. Բալուեանի «Զուարթնոց» տարեգրին մէջ եւս քննուեալիկ մը (Իբր Զարդ) տեսայ, գրի առնուած

(*) Այս ոտանաւորներէն մէկ քանին հրատարակութեան յանձնած եմ տեղական եւ արտասահմանի տարեցոյցներու, պարբերականներու եւ օրաթերթներու մէջ:

1. Կո հեղ աղ Կո
 2. Սարգիս Գաբրիել
 3. Կիր արքայ
 4. Կիր արքայ
 5. Կիր արքայ
 6. Կիր արքայ
 7. Կիր արքայ
 8. Կիր արքայ
 9. Կիր արքայ
 10. Կիր արքայ
 11. Կիր արքայ
 12. Կիր արքայ
 13. Կիր արքայ
 14. Կիր արքայ
 15. Կիր արքայ
 16. Կիր արքայ
 17. Կիր արքայ
 18. Կիր արքայ
 19. Կիր արքայ
 20. Կիր արքայ
 21. Կիր արքայ
 22. Կիր արքայ
 23. Կիր արքայ
 24. Կիր արքայ
 25. Կիր արքայ
 26. Կիր արքայ
 27. Կիր արքայ
 28. Կիր արքայ
 29. Կիր արքայ
 30. Կիր արքայ
 31. Կիր արքայ
 32. Կիր արքայ
 33. Կիր արքայ
 34. Կիր արքայ
 35. Կիր արքայ
 36. Կիր արքայ
 37. Կիր արքայ
 38. Կիր արքայ
 39. Կիր արքայ
 40. Կիր արքայ
 41. Կիր արքայ
 42. Կիր արքայ
 43. Կիր արքայ
 44. Կիր արքայ
 45. Կիր արքայ
 46. Կիր արքայ
 47. Կիր արքայ
 48. Կիր արքայ
 49. Կիր արքայ
 50. Կիր արքայ
 51. Կիր արքայ
 52. Կիր արքայ
 53. Կիր արքայ
 54. Կիր արքայ
 55. Կիր արքայ
 56. Կիր արքայ
 57. Կիր արքայ
 58. Կիր արքայ
 59. Կիր արքայ
 60. Կիր արքայ
 61. Կիր արքայ
 62. Կիր արքայ
 63. Կիր արքայ
 64. Կիր արքայ
 65. Կիր արքայ
 66. Կիր արքայ
 67. Կիր արքայ
 68. Կիր արքայ
 69. Կիր արքայ
 70. Կիր արքայ
 71. Կիր արքայ
 72. Կիր արքայ
 73. Կիր արքայ
 74. Կիր արքայ
 75. Կիր արքայ
 76. Կիր արքայ
 77. Կիր արքայ
 78. Կիր արքայ
 79. Կիր արքայ
 80. Կիր արքայ
 81. Կիր արքայ
 82. Կիր արքայ
 83. Կիր արքայ
 84. Կիր արքայ
 85. Կիր արքայ
 86. Կիր արքայ
 87. Կիր արքայ
 88. Կիր արքայ
 89. Կիր արքայ
 90. Կիր արքայ
 91. Կիր արքայ
 92. Կիր արքայ
 93. Կիր արքայ
 94. Կիր արքայ
 95. Կիր արքայ
 96. Կիր արքայ
 97. Կիր արքայ
 98. Կիր արքայ
 99. Կիր արքայ
 100. Կիր արքայ

Կոմիտաս Վարդապետի ծննդավայրի տեղանքին էջերէն
 մէկը, ուր կը տեսնուին իր կողմէ կատարուած զանազան
 սրբազրուածքներն ու փոփոխութիւններն: Ուրիշ էջի մը
 վրայ վերջնական ձև տուած է այս բերթուածին (ՏԵՄ
 էջ 54-55):

1914ին (*): Այս երկու բուսականները բաւական
 էին ցոյց տալու, քէ մեծանունն արուեստագէտը,
 արտիստը ընթացքին, հաւանաբար մինչեւ այն
 չարաղէտ բուսականը՝ երբ մրագնեցաւ իր իմացա-
 կանութիւնը, աւելն աւելն ինքնամոլութեան պահե-
 ռու մեջ սեւագրած է իր խոհերն ու զգացում-
 ները, տոնիկ երգերու ներշնչումով, մնալով
 միշտ ժուժկալ եւ իր խորին մեջ ազնուական: (**):

Ձեռագրին մեջ, տեղ տեղ (լուսանկարներու վրայ)
 երաժշտական խաղերու գոյութիւնը, բառերու նըր-
 բախիլը ընտրութիւնն ու ներդաշնակ յանգանորումը
 ենթադրել կուտան, որ Կոմիտաս Վրդ. շատ հաւա-
 նաբար մտադրած էր գեր մասամբ եղանակաւորել
 նաեւ իր այս ինքնաստեղծ փառերգութիւնները,
 որոնք կարծես բիւրեղացումն են ժողովրդական եր-
 գերուն ու վերստեղծումը առաւելագոյն աշխարհ-
 փայ բարբառներու բնաստիկ արտայայտութեանց:

Իր գրչին տակ մասնաւոր հրապոյժ մը կ'ստա-
 նան նորակէրս ու նմանահունչ բառերու գործա-
 ծութիւնը եւ իր պատկերաւից տպերուն երաժշտա-
 կան գնացքը: Անոնց ներքեւ կը բարախէ փառա-
 կան ջերմ շունչ մը, որ կուգայ իր հոգիին ըն-

(*) Կոմիտաս Վրդ.ի ծննդավայրի տեղանքին բովանդա-
 ցութեան մաս չէին կազմեր այս երկու բերթուածները:

(**) Կարելի չանքը եղած է նոյնը պահելու իր ծն-
 ւագիր տեղանքին բովանդակութեան յաջորդական շարքը:

դերմներէն: Պէտք է կենալ վայրկեան մը եւ մտնի մէկ տողին ու բառին հաղորդական յուզումն ու քաղցրութիւնը հաշակել:

Կոմիսսս Վրդ. իր մայրիկին նուիրած է ամենէն արագրաւ տղերք, որոնք որդիական խանգակաբ սիրոյ գոհարներ են: Արտառուշ ոգեկոչումի մը մէջ ան բաւի տալով իր երեւակայութեան, կրկնապէս կը ներշնչուի, կը գերազանցէ ինքզինքը եւ կը լուսագծէ: իր իտեալը՝ իր մօր բերնով, որպէս նուիրական պատգամ (Մայրիկիս Օրօրը):

..Քեզի՛ տեսնեմ, իմ հասորիկ,
կեանքիս ուղին, սիրազեղ,
Յայտ ու անշայտ դու որունե,
Քեզի շինին իրազեկ:

Մի՛ թախտե կեանքի պարսպ
անապատում դու ի գուր,
Քեզ պահապան սուրբ հաւատոյ,
յուսոյ, սիրոյ Լոյս ու Հուր:

Օրիկ օրին,
Իմ անուշին:

Իր մօր խորհուրդներուն հաւատարիմ, կ'ընթանայ անոր գծած շաւղէն, գեղարուեստի բար-

ձրագոյն ոլորտներուն մէջ հախրելով ու սլանալով դեպի կատարելութիւն.

Դիշեր-գիշեր, շունեկ շուսին
մըտքիս ծովը խորացաւ,
Յորեկ-ցորեկ, արեւ-արեւ
հոգուս հովը զօրացաւ.
Մօրս կրտսին ախի-ախի
սրտիս աւանդ պահեցի,
Երկրե երկին, երկեկ երկիր
ազատ-ազատ տանեցի:

Բացի կրօնական լարէն, որ մերք կը բրբռայ անհունին մէջ երկարաձգուող մեղեդիի մը պէս (Հանուր Տիրոջ, Օրհնութիւն, եւլն.), Կոմիսսս Վրդ. ի մէջ խօսած է աւելի բնութիւնը՝ քաղուն սիրոյ մեմունջներով: Գարնան ցօղաբուրմ ծաղիկները քերք քերք կը բաւին իր եուրեան խորք, կը վերածնին երգի ու նուագի, արեւուն ջերմ հառազայքներովը օծուն կը դառնան քաղցրահոտ կայլակներ ու իր հոգիին ծառար կը յագեցնեն: Հովիկներ կեանքի սերը կը քորովեն, կը զգուեն ու կը պարուրեն իր սիրքը (Սեր-Հովիկ):

..Թող նա վառե իմ ծոցիկին ոսկի յոյս,
Հողմահարե դու բոցիկին, որ իմ յոյս
Լանջիս վերայ,
Յաւեհ եռա:՝

Անհատին խորերը սողսկող լուսնի ծովերուն ու սիրոյ հովերուն առթած քախիծը զինքը կ'առանձնացնէ իր տունը եւ կը յանձնէ բունին մխիթարութեան. եւ կամ՝ աշխարհայեցողութեան ու անձրեւը, սարերու վրայ «օրան-օրան» շարունակ ամպերու հեւքն ու գոռումը անդրադառնալ կու տան անոր՝ իր «սեւակոր» կեանքին...

...Մոխիր ամպեր ժիր եկան

Դարակ-դարակ,

Սարի վերայ ցիր եկան.

Հաղեց աշուն օր՝

Կեանքիս սեւակոր:

Կամիսասեան սաղերգութիւնները աննիւզ ու ինքնեկ բխումներ են գրեթէ բոլորն ալ: Երբեմն քանի մը տղով հոգեկան յուզումի մը բաբախուն պատկերը կու տայ ան: Իր ներշնչման տարրերը (ծառ, ծաղիկ, դալար, սար ու դաշտ, հունձք ու բերք, հով ու անձրեւ, շաղ ու ամպ, լուսին ու երկինք) գիտէ կենդանացնել, շունչ ու լեզու տալ անոնց, զանոնք խօսեցնել, անոնցմով սեղծել դաշն համանուագ մը, որուն վրայէն կը սանի կ'անցնի հեւացող գեփիւռ մը, քնուռ քեւաբախումներով եւ այս բոլորին կը խառնուին յանաւանդ անանձնական սիրոյ արագօրէն մեղեդիներ (Հով ու Ծով Մ.Բ.).

... Հոգիս եկաւ հովի պէս,
Սերը սրտում ծովի պէս,
Ծոցին վարդեր՝ ասաց. «Տէ՛ս,
Քեզ սիրեցու եկայ ես»:

Այս տղերուն մեջէն չե՞ք լսեր արտառուշ արձագանգը գողքան երգերուն, աշուղական սագերուն, անտունիներուն եւ կրօնաշունչ սաղերուն ու մեղեդիներուն, որոնք իր հոգիին սնունդը եղած են:

* * *

Երգահան ու երգասաց Վարդապետը իր քնարերգական սեղծագործութիւններով յետ մահու կը յայտնուի միանգամայն խորագրաց քերթող մը: Տարիներ անընդհատ հաւատած է ան հազարաւոր գեղջկական երգեր, դաշնաւորած է անոնցմէ լաւագոյնները, երկար զբաղած գաւառաբարբառներու ստուգաբանութեամբ, իր հոգին ընդունաւորանք եղած է հայ ժողովուրդի զանազան հասնածներու տոհմիկ աւանդութեանց, անխառն սիրոյ, կարօտի եւ հաւաստի կայծկլտումներուն, ներշնչուած է անոնցմով եւ միակ իսեալը եղած է նշուել, մեկնաբանել անոնց բարձրագոյն արժեքը ու գեղարուեստական աշխարհին ընծայաբերել հայ ինքնուրոյն երաժշտութեան գանձերը:

Ահա այս նուիրումին մէջ, մեծաստղանգ ար-

ուեսագէտը չէ կրցած անտարբեր մնալ յուզական
այն փոքորիկին հանդէպ, որ փրքած է իր ներ-
սէն ու քրքուացուցած իր ետքեան բազմալար
սաւիղը: Ստեղծած է իրեն յատուկ տաղաչափու-
թիւն մը, ֆերքողական բարբառ մը եւ արտայայ-
տութեան ինքնատիպ ոն մը: Իր յօրինած բառերն
ու անոնց գործածութեան եղանակը առաջին տկ-
նարկով գուցէ մեղանշում մը նկատուին ֆերակա-
նական օրէնքներու դէմ: Սակայն լուրջ եւ անմե-
ղադիր հայեացք մը՝ եւ արդէն կը փարստի ամեն
սարակոյս:

* * *

Հայ գեղարուեստական գրականութեան ծա-
ռայելու իր ձգտումին մէկ նոր ապացոյցը կուտայ
«Մշակոյթ» Հրատարակչականը, կորուսեալ փրկե-
լով ֆնարերգութեանց այս բանկագին հաւաքա-
ծոն, որուն հրատարակութիւնը կը զուգադիպի
Կովիսա Վարդապետի ծննդեան 70 ամեակին եւ
որ մեզ կ'ընծայէ առիթը խոր յուզումով ոգեկո-
չելու նուիրական յիշատակը հայ երաժշտութեան
մեծագոյն վարպետին:

Թ . Ա . Զ . Ա . Տ . Ե . Ա . Ն

Ք Ն Ա Ր Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր




ՔԵՐԹՈՂ ՎԱՐԴԱՊԵՏԸ

2600-79

ՄԱՅՐԻԿԻԱ ՕՐՈՐԸ

Դեռ արգանդում՝ մայրիկըս ինձ
Վարդ էր բուրում, ուռգում.
Եւ իր հոգում այգ-արեւով
Գուրգուրում ու նորոգում:
Ծընած օրէն մայր շրթներով
Սէր էր վառում օրօրում,
Արեւ-Լուսին հոգւով-մըտքով
Նըկարում ու բոլորում:
Հայր զարկերով արի-արի
Խօսում էր իմ երակում,
Մայր կաթերով արիւն-արիւն
Հոսում էր ու կերակրում:



«Ես սիրում եմ՝ Հանուր-Տէրը
իմ հոգումը գահաւոր.
Քեզ սիրում եմ՝ Նորա Սէրը
քո ծոցումը ջահաւոր,
Արեւ-արեւ ու անուշակ
երգ ու տաղով զարթելով,
Օրեր-օրեր փունջ մանուշակ
հիւսելով ու բարդելով,

Օրի՛կ օրին,
Իմ անուշին:

Աչքըդ Նորան՝ հոգւով մըտքով՝
արիացի՛ր, աշխատէ,
Երկնի, երկրի կամարներով
վերերն անցի՛ր ու դատէ:
Ո՛վ որ երթայ յոյս-առապար
փառազեղուն Անհունի,
Նա՛ կը զըտնէ լոյս-ճանապարհ
կենսաբեղուն Հանուրի:

Օրի՛կ օրին՝
Իմ անուշին:

Քեզի տեսնեմ, ի՛մ հատորիկ,
կեանքիս ուղին, սիրազեղ,
Յայտ ու անյայտ դո՛ւ որոնէ,
քեզի՛ լինին իրազեկ:

Մի՛ թափառէ կեանքի պարապ
անապատում դու ի զուր,
Քե՛զ պահապան սուրբ հաւատոյ,
յուսոյ, սիրոյ լոյս ու Հուր:

Օրի՛կ օրին,
Իմ անուշին:

Քեզ դընում եմ խորհրդաւոր,
առակաւոր յոյս-աշխարհ,
Ես գընում եմ, իրար զըրկենք՝
վե՛ր, փառաւոր լոյս-աշխարհ.
Ես գընում եմ ու թողնում եմ
երկիրն ու իր հընութիւն,
Աջն ու խաչը քեզ ապաւէն,
Օրօրդ հիւսէ բընութիւն:

Օրի՛կ օրին՝
Իմ անուշին»:

Երբ իմ արեւ երկրորդ ամրան
մանուկ հասկերն էր փընջում,
Եւ իմ մայրիկն արեւմտի
դեղին զարուհն էր շընջում,
Թըռա՛ւ-զընաց, երկնի խորան՝
մըտաւ իբրեւ աղանի.
Եւ ինձ թողեց մենաւորիկ՝
իր հոգովը հովանի:

— «Քեզ լուսո՛յ վայր՝»
Իմ գարո՛ւն մայր:

Դըրսէն ներսը ծողակ-ծողակ
մըտքի կամար շինեցի.
Ներսէն դուրսը օղակ-օղակ
հոգու շարան հիւսեցի.

Հոգիս թեթեւ մի վայր մի վեր,
լոյս ծովերով թեւելով՝
Գոգըս լի բեռ անմայր անսէր
լոյս հովերով հեւելով:
Ես արթընցայ՝ սարի-ծաղիկ,
շողերով ու ցօղերով,
Ու քնեցայ ծառի, խոտի
հովերով ու զովերով:

Օրի՛կ օրիկ,
Գարուն նորիկ:

Գիշեր-գիշեր, լուսնէ լուսին
մըտքիս ծովը խորացաւ,
Յորեկ ցորեկ, արեւ-արեւ
հոգուս հովը զօրացաւ:
Մօրըս կըտակն ալիք-ալիք
սըրտիս աւանդ պահեցի,
Երկրէ երկին, երկնէ երկիր
ազատ-արձակ սահեցի:

Օրի՛կ օրիկ՝
Գարուն նորիկ:

Երգ ու տաղեր սարէն, ծորէն
տունկ ու ամպով զարթելով
Տուն ու տաճար սըրտի խորէն
բոյր ու ծայնով բարդելով:
— «Օրե՛ր սարին
Ու տաճարին»:

Կանաչ երկրի մըթնոլորտը
պատառ-պատառ յաղթեցի,
Կապոյտ երկնի լուսոյ խորը
կատար կատար գաղթեցի:
Վարդի բոյրով, լոյս համբոյրով
գիրկըս թռաւ Մայրիկըս.
Ձեռքէս ըրռնեց, առաւ տարաւ,
տարաւ ցուցուց Հայրիկըս:
— «Երնէ՛կ օրին՝
Երկնի խորին»:

Հանուր Փառքին Հըրոյ Աթոռ
լուսոյ գահոյկն իր վերան,
Բոցատարած հոգի, ոգի
երգում էին մի բերան.
«Բարի՛ եկար, Ազատորդի՛,
մեր սուրբ խորան յուսալիր,
Հայրըդ, Մայրըդ տօնաւոր են՝
երկրէ երկին լուսալիր:
— «Երնէ՛կ օրին՝
Երկնի խորին»:

Կ Ե Ս Ն Ք

Շառա՛հ, շառա՛հ...

Սարէն հեղե՛ղ փրթաւ,

Վագո՛ւմ է առաջ ու շեշտակի.

Հողէն ծառեր ծամելով,

Հողէն քարեր քամելով.

Գետը լըցաւ ու գալարեց,

Սիրտը խըցաւ ու պալարեց.

Ցելա՛ւ, ցելա՛ւ...

Ամպէն արե՛ւն ելաւ,

Նագում է կանաչ ու հեշտակի.

Սարի խոցին ժըպտելով,

Ծառի ծոցին ծըպտելով,

Պաղառ գետին ջե՛ր բերելու,

Խաւար սըրտին սէ՛ր մէրելու:

Կ Ո Յ Ր Ը

Տէ՛ր իմ.
Սէ՛ր իմ.

Զարկին Քաջքեր՝

Կուրացուցի՛ն իմ աչքեր.

Հո՛յս տուր.

Յո՛յս տուր.

Ասա՛՜ նայէ՛՜

Իմ՝ աչերո՛ւն խընայէ:

ՃԵՐՄԱԿ ՀԵՐ, ԳԱՐՈՒՆ ՍԷՐ

Ես ու դու սէ՛ր ենք,
Մէկ սրբաւի տէ՛ր ենք.
Նըռան ճիւղերով բոցուն,
Սիրոյ տաղերով արբուն:

Տե՛ս, իմ հեր՝
ձերմակ սէր,
Որ պաղել էր շատ ծըմեռ
Սրբաւիդ բաղում դալարեց:

Տե՛ս, քու սէր՝
Գարուն էր՝
Որ գոցեց իմ խոց ու վէր,
Սրբաւիս խաղում ծաւալեց:

ՀՈՎ, ՈՒ ԾՈՎ, ՍԷՐ

Կապոյտ երկիրն էր եռում,
Կարմիր երկիրն էր ջեռում.
Հուր ու Հարաւ հեւ ու հեւ
Թախիծ ու աօթ էր բերում:

Հոգիս եկաւ հովի պէս,
Սէրը սըրտում ծովի պէս.
Ծոցին վարդեր՝ ասաց. Տե՛ս,
Քեզ սիրելու եկայ ես:

Վարդ ու քրքրում էր բուրեց.
Սիրտըս սըրտում գուրգուրեց.
Արեւ-լուսին պագերով՝
Երագ-երագ համբուրեց:

Հոգի՛ս, ասաց ու ծըռեց.
Ծամեր բացաւ ու փռեց.
Ստինք-ստինք փարելով՝
Յոյզըս մարաւ ու լըռեց:

Գ Ի Տ Ա Ն

Դու ինչե՛ր էս տեսնում, ինչե՛ր, ո՛վ դիտակ,
Որ մեր աչքին՝ աներեւոյթ անգիտակ.
Երկնի օրը քեզանով ենք կատարում,
Երկրի խորը քեզանով ենք պատառում:

Դարժի՛ր, դարժի՛ր, ո՛վ իմ դիտակ լուսածին՝
Կեանքի, ջանքի, յուսոյ հընար ճարելով,
Ձարթի՛ր, զարթի՛ր, ո՛վ իմ գիտակ յուսածին՝
Մըտքի, հոգու սիրոյ քընար լարելով:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Հալուն-հալուն,
Սարին, ձորին խօսելէն,
Երես-երես,
Քարէն, հողէն հոսելէն՝
Գարուն իջաւ մըխալով,
Առուն շիջաւ ծըխալով:

Բաղիկ տեսայ՝
Լոսին-ցօղին՝
Լողիկ-լողիկ արբելէն՝
Կանաչ տափերին:
Առուն փեսայ՝
Հողի զոզին՝
Դողիկ-դողիկ տարփելէն՝
Ծաղիկն ափերին:

Հալուն-հալուն,
Ծառի, ծաղկի հոտերով,
Երեր-երեր,
Ծովի ցամքի մօտերով՝
Առուն ուռաւ՝ վերացաւ,
Բուր ու առ զարուն հեռացաւ:

ՆՈՃԻՆԵՐՆ ՈՒ ՄԱՅՐԻՆԵՐ

Մուգ նոճիներ միգապար՝
ձամբի վերեւ սիգապար՝
Դէպի երկինք հըրագայր,
Կանաչ յուսով սըրածայր,
Ճիւղերն ի վեր կոնաւոր՝
Կարծես լինին տօնաւոր:

Կուսատերեւ մայրիներ՝
Ֆուսաբեղուն այրիներ,
Փըշերն աչքին պիշելով՝
Արեւ օրեր յիշելով,
Քարերի ծոց պատառել,
Ամպերի գոգ կատարել:

ԱՇՈՒՆ ԿԵԱՆՔ

Աչքի առաջ,
Հառաչ-հառաչ,
Խորհրդաւոր տերեւներ,
Բունէն ընկած կեղեւներ,
Հողի վերայ,
Դեղին յուսով
Կողի վերայ:

Հուռ, անտերունչ,
Խուլ, անմըռունչ՝
Չորով-փորով կեռ ծառեր,
Ծըռռիլ-փըռռիլ լեռ քարեր,
Եւ յենաւոր՝
Սարի կողին,
Ե՛ւ մենաւոր:

ՍԱԼԱՅԱՍԿՆ,

ՈՒ

ՈՒՂԻՆ,

Սալայատակ-սալայատակ քալեցի,
Սալի վերայ կեանք ու ջանքըս հալեցի.
Ոսկի, արծաթ սալի սըրտում սարերով,
Ծառ ու ծաղիկ սալի շրջում բարերով:
Սալը յեցած եւ ո'չ մի բան չիմացաւ,
Վերան յիմար կեանքի ուղին վիմացաւ:

ՄԵՆԱՌ

Երբ անտառում լուսնի ծովեր,
Սիրոյ հովեր,
Սողոսկեցան ծառէ ծառ
Ու սարէ սար,

Եւ ամէն մարդ՝
Գըտաւ մի վարդ
Սըրաիկին զարդ,

Ես մենաւոր մտայ տուն,
Ինծ մըխիթար զբտայ քուն,
Որ աչերուս կապեց մէջ,
Ու տարածեց վերարկուն:

Ի Մ Ե Ր Ա Ջ ՈՒ Մ

Եւ ա՛յս գիշեր, իմ երազում, քեզ հետ մէկտեղ պարեցինք,
Սէր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին:
Ոսկի-արծաթ ամպի ծալէն նուրբ ու բարակ քօղ փարեցինք,
Ինծի-քեզի կարմիր-կանաչ սիրոյ շապիկ կարեցին:

Ս Ի Ր Ա Հ Ա Ս Կ

Ո՛վ է տեսել ծովի ծաւալ
Հովի թաւալ.
Կամ՝ արտերում հասկի տալիք
Ոսկի ալիք:

Ա Շ ՈՒ Ն Օ Ր

Սեւուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վերայ շար եկան:
Մազեց առաւօտ
Պաղեց, սառաւ օդ:

Գռաց երկինք. բուր արաւ,
Հեւաց, հեւաց.
Ծեբուկ երկիր սուգ արաւ:
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր զոդաց-բա՛մբ:

Բողբոջ արեւ շող կապեց,
Դողաց, սողաց,
Արիւն ամպից քօղ կապեց:
Վառեց լեռան լանջ,
Լեռան ցաւատանջ:

Տեղաց անծրեւ մաղ տալով,
Մարմանդ-մարմանդ,
Յոգնած տերեւ շաղ տալով:
Երկիր քուն զըրաւ,
Եւ թռչուն թըռաւ:

Յուզուած առուն փախ տուաւ
Սողուն-սողուն,
Զորում մըշուշ կախ տուաւ:
Քամին ելաւ վեր,
Արաւ տալուրեր:

Մոխիր ամպեր ժիր եկան
Դալուկ-դալուկ,
Սարի վերայ ցիր եկան:
Հալեց աշուն օր
Կեանքիս սեւակոր:
1905

Ս. Ս Տ Ո Ւ Ա՛՛ Ծ Ի Ս

Սիրոյ սերմը զատեցիր,
Հըրոյ ջերմը ստատեցիր.
Հողին շունչը փըչելով՝
Հոգի կեանքը կաթեցիր:

Եւ Արեւը լուսին մարմնէս մաղեցաւ,
Եւ իմ հոգին Հոգուդ չօղով շաղեցաւ,
Իմ սըրտիկի սէրն ու բոցը, սիրոյ խոցը՝
Ամպերի մէջ, որպէս կայծակ սահեցաւ:

ԾԱՂԻՆՆ ՈՒ ՇԱՂԻՒՆ

Ե՛կ, շա՛ղիկ, ե՛կ.

Ե՛կ՝ առաւօտէ՛ առաւօտ.

Զ՛եղնէ՛ արեւ տաքուկ ու ծարաւուտ՝

Լըզէ մեր պագուկ:

Գա՛մ, ծաղի՛կ, գա՛մ.

Գա՛մ՝ այգուն-այգուն

Ու քեզ շա՛ղ տամ:

Դեռ չելած արեւ խայտուն ու ցայտուն՝

Շաղիկ-շաղիկ թառաւ սրբախին ու հոգին՝

Ծաղիկիկի ծարաւ գոգին՝

Ու գունագեղ թուշիկ

Շա՛ղ դառաւ յուշիկ-յուշիկ:

ՕՐՆՆ ՈՒ ԹԻՒՆ

ձակատըդ օծուն՝

Լուսաւորչայ կանաչ Մեռնոով.

Լուսաւորչայ կանաչ Մեռնոով՝
Թող կանանչեն հուռ ճիւղերըդ.

Ու ակըդ բոցուն՝

Լուսաւորչայ կարմիր կերոնով.

Լուսաւորչայ կարմիր կերոնով՝

Թող ճաճանչեն հուր իւղերըդ:

ԹԵՐԹԻՒՆ ՈՒ ՅՕՂԻՆ

Գարուն-թերթիկն ընկել էր ծալուկ՝

Խոտերի մէջ դալուկ.

— Աշուն ցօղիկն իջել էր վերան՝

Հողմերի հետ երան:

Շընչէ՛, հովիկ,
 Դու թոթովիկ՝
 Կեանքի սէրք՝
 Սըրտի բերք՝
 Պարուրելով,
 Ծնւրուրելով՝
 Ծովի ալքէն,
 Ամպի ծալքէն,
 Ալ ծաղկունաց
 Հըրոյ հալքէն,
 Թող նա վառէ՛ իմ ծոցիկին ոսկի լոյս,
 Հողմահարէ՛ դու բոցիկին, որ իմ յոյս՝
 Լանջիս վերայ
 Յաւէտ եռա՛:

Եւ ա՛յս գիշեր, քո երագում, տեսել ես որ՝ ես ու դու՝
 Երես-երես ժանաչել ենք սիրոյ ծովում իրարու...

Քո սուրբ սէրը սար է դառել
 Դալարագեղ, երկնածրբար ու բեղուն,
 Գրլիսիգ վերք ամպ է շարել՝
 Գալարահեղ, կամարակապ ու զեղուն:

Սարի շողէն, ամպի բողէն՝
 Մենաւորի ոգին ծընել, դեզերել,
 Զեռին մի բոյս՝ կանաչ ու կոյս՝
 Խորհրդաւոր ձորէն բաղել ու բերել:

Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
 Ամպի տակին՝ արեւծագին շունչ առել,
 Զըրի մօտին, կանաչ խոտին՝
 Գրլիսիգ վերել ծիրան-գօտին վունջ արել:

Ա Շ Ո Ւ Ն

Ծառեր, թրփեր լեցուն միրգ,
Մառան տարան զիրկ ու զիրկ,
Աշուն սընաւ:

Սաղարդ-սաղարդ սարսելով,
Ոսկի տերեւ դարսելով,
Աշուն րընաւ:

Տարափ ու բուր փրջելով,
Վայուն-մայուն քըջելով
Աշուն ծընաւ:



Ի Բ Բ Զ Ա Բ Գ

Օրէ օր	Նորէն նոր
ձրրագ առ,	Կրրակ տար
Պահէ վառ՝	Անըսպառ՝
Մտքիդ յար	Սրբտիդ յար
Լուսատու,	Յուսատու:



Ա Շ Ո Ւ Ն - Գ Ի Շ Ե Բ

Զիւնիկ լուսին,
Սարի ուսին,
Դեղին-կարմիր շաղալէն,
Ալիք-ալիք խաղալէն,
Ծովի ծոցին՝
Ալ ժապաւէն
Տուել բոցին:

Ծառեր, հողմեր,
Ամեն կողմեր,
Թըռչունն դառել երգելով,
Հեռու-հեռու հերկելով,
Երան-երան
Թռելով
Օդի վերան:



Երկնի կայծեր բիւրափառ
 Հըրոյ հովէն ցիր ու ցան,
 Գիշեր-երկիր հիւրաբար՝
 Լուսոյ ծովէն կաթեցան՝
 Աչքին սօսուն,
 Մըտքին խօսուն:



Ահա՛ սարը՝ ծորը բացել՝
 Ե՛լ տհաւոր, ե՛լ կանաչ.
 Ահա՛ քարը՝ օրը զացել՝
 Ե՛լ մահաւոր, եւ անաչ:




Խըցիկիս մօտ ջուր եմ արել մարգ ու մարգ,
 Վարդիկիս հետ հուր էր դս ու ել բարկ ու բարկ:
 Ելայ անհոգ սարերի զոգ շըլ ճելու,
 Սիրու ամսիր բոլորեցին թըրջելու:

Մահիճիս քով հուր եմ վառել դողունի
 Վարդիկիս հով դուռ էր ծարել գողունի.
 Լանջէս ի վեր սիրոյ շիթեր շաղելով՝
 Երագ-յոյգեր նուագեցին խաղալով:

Գիշեր զացաւ՝ լուսին-լուսին յուսալի.
 Նոր օր բացաւ՝ արեւն ուսին լուսալի:

Մենաւորի խըցիկէն՝
 Յուսոյ սարակ շաւիղով
 Աշխարհ մըտայ,
 Վարդի բոյրի զըծիկէն՝
 Հովի բարակ տաւիղով՝
 Քեզի զըտայ:



Բարակ ուղին սողալով:
Ոտի տակին դողալով՝
ձամբի ծայրին բուսել է
Կեանքի ծառը շողալով:

Ի՞նչ լայն սիրտ է, որ ունի,
Այս փանապարհն Անհունի...
Մարդու, բուսի, գազանի
Եւ թեւաւոր թռչունի:

Ծ Ո Վ Ա Կ, Ն Ա Ի Ա Կ

Ծաւալ ծովակ՝ ալին վըսիտ փընջելով,
Յաւը սրբաւում՝ շամբերի պէս ցցելով,
Շընչում էր երկունքներէն զովացած.
Վերան նաւակ՝ հովի ժըպիտ ջընջելով,
Մուխը տըրտում՝ ամպերի պէս կցելով,
Փընչում էր մարդիկներէն ծովացած:

Ձուրն ու խոցը երեւում է՝
Ծովի վերայ ծիր ու ծիր,
Հուրն ու բոցը երերում է՝
Հովի վերայ ցիր ու ցիր:

Ս Է Ր ՈՒ Զ Ե Ր

Արեւն այտէն
Ծիրան ցայտով,
Լուսիկ-լուսիկ շրրագեց,
Կազաւ ոսէն
Վարդի հոտով,
Յուսիկ յուսիկ կըրակեց:

Ծառի քովէն,
Սարի հովով,
«Զիս կը սիրե՞ս» շրրշրնջեց.
Հոգուս խորէն,
Սիրու ծորով,
Զիս կը սիրե՞ս, մըրմընջեց.

Աչքի տակէն
Սըրտիս ակով
Ծաղիկ-ծաղիկ ծիծաղեց,
Գոգի մարզէն
Բարակ զարկով,
Գաղիկ-գաղիկ շաղ մաղեց:

Աղբէր քուրէն,
Սառն աղբուրով
Տորոն-տորոն սէր փընջեց:
Հուր աչերէն
Լուռ պաչերով
Որոն-որոն ներշնչեց,



Ա. Ռ. Ա. Զ.

Այսօր, նորէն, դէմքիդ վերայ զիշեր է կաթել,
Շանթ ու կայծակ ճայթելէն.
Սըրտիդ խորէն արիւն կ'եռայ՝ ամպեր են պատել,
Հուր ու փայլակ սայթելէն:

Սըրտով բարի,
Հոգիդ արի՛
Որ քու նաւը
Զը շըւարի՛:

Կեանքի կըռիւ՝ ճիշդ դատելով՝
Կանաչ, խըռիւ միշտ զատելով:

Դէպի առա՛ջ.
Հեռի հառա՛ջ:

Ս Է Ր Ո Ւ Ռ Ե Ր



Գարուն սէրն էր՝
Դալար-օրերում շոգիացաւ սըրտիս վերայ՝
Ամպեր-ամպեր ծալ ու քաշ:

Կեանքի եւն էր՝
Ամառ-ձորերում ոգեցաւ կըրծիս վերայ՝
Լուսին-լուսին հալ ու մաշ:

Աշուն-բերն էր՝
Պըտղիկն էր հոգում ծառերով՝
Սըրտիս բակին նուշիկ նուշիկ բարդելով:

Այն ձըմեռն էր՝
Զիւնիկն իր գոգում սարերով՝
Կըրծիս տակին ուշիկ-ուշիկ գարթելով:



ՈՍԷՐ - ՄԵՂԱՅ

Ա՛յ, վա՛ռ աչեր.
Այն ի՞նչ ամպ էր՝
Սարի զագաթին,
ձերմակ-ճակատին՝
Արծաթ աչեր տալով՝
Յիր արաւ:

ձերմակ-ճակատէն՝
Սարի փափաքին,
Դարի պապակին
Շար մարգարիտ տեղաց,
Շար մարգարիտ տեղաց,
Լար մարգերը բիլ արաւ,
Ուսուն-հըրով վառ մարգերը ծիլ արաւ,
Զառ-մարգերը ոսկի-մեղաց.
Ոսկի-մեղաց լուսուն-ջըրով
Մըկըրտեցին քու մաճերը:

ԲՈՒՍԱԲԱՐԵՐ

ՍՆՈՒՆԴԸ՝ ԾԱՌԻՆ.

Ծառի՛կ, ծառի՛կ,
Շունչդ ահառիկ.
Ի՛նչ ու ի՞նչպէ՛ս՝
Անջուր անլուր,
Քո քուռ ու կուռ,
Դալալում ես
Դէպի երկին փըռելով,
Ու ճիւղերդ ջրբելով:

ԾԱՌՆ՝ ԱՐՄԱՏԻՆ.

Բունի՛կ-բունիկ՝
Կաթնետունիկ.
Ի՞նչ, ու ինչպէ՛ս

Քո երակներ
Լուսոյ ակեր
Պալարում ես
Եռուն-եռուն կրրակելով
Հեռուն-հեռուն ձրրագելով:

ՔՈՒՆԸ ԲԱՐԻՆ.

Բարի՛կ-բարիկ՝
Շունչ-պարարիկ.
Ի՞նչ, ու ի՞նչ պէս
Տընիկ-տընիկ
Բազմածընիկ
Գալարում ես
Ողի-ողի Նուագելով
Պահիկ-պահիկ հաւարելով:

ԲԱՐԸ՝ ԾԱՂԿԻՆ.

Ծաղի՛կ-տիրուն՝
Երկրի՛ սիրուն.
Էդ ի՞նչ ու ի՞նչ
Թերթիկ ունեա՛
Կարմիր-ծուն ես.
Ու լարում ես.
Բոլոր-մոլոր եռ. թըշերով
Ոլորուելով սեր նըշերով:

ԾԱՂԿԸ՝ ՏԵՐԵԻՒՆ.

Տերե՞ւ-տերեւ,
Գըլխավերեւ,
Էդ ի՞նչ ու ի՞նչ
Առակ-առակ՝
Կանաչ-կարսգ
Նըկարում ես.
Քու մատիկներ հեղուն-բեղուն
Ու պատիկներ եղուն՝-մեղուն:

ՔՈԼՈՐՆ՝ ԻՐԱՐ.

Միանալով՝
Հիանալով:

ՈՒՌԻ 30 Ղ.

Մայրի՛կ, մայրի՛կ,
Մեր ուռե՛ի ի՞նչ է լս լիս առուի ափին:
— Հատի՛կ, հատի՛կ,
Իր ձիւղերէն ցօղ է տալիս կանաչ տափին:

Ի՞նչ...

Մահող հովեր՝...

Թէեւ ճրկուն՝

Թեւերն արծակ

Կը փըքեն:

Ահա՛ ծովեր՝

Թէեւ նրկուն՝

Ձեւերն արծակ

Կը կըքեն:

Հի՛ն տարիներ,

Սի՛ն տարիներ՝

Բուխ գարունով.

Ծուխ շարունով:

Ջրեր ծալեակ՝

Թէեւ թեթեւ,

Իրար-հըրան՝

Կը շրջին...:

Հրեր հալեակ՝

Թէեւ դեղեւ՝

Իրար-կըռան՝

Կը հըջին...:

Ն՛ր տարիներ,

Եւ աշունով.

Օր բարիներ՝

Սէր դաշունով:

Ն Դ Ո Ւ Ս Է Ր

Երկիրը եռում է՝ կողիկը գոցելով՝ ծաղիկ-ծաղիկ,
Առուակը սիրում է՝ հողիկը խոցելով մաղիկ-մաղիկ.
Վարդիկը ջեռում է շողիկը բոցերով՝ լըռիկ-լըռիկ,
Հովիկը ծիրում է՝ լողիկը ծոցերով՝ ջըրիկ-ջըրիկ:

ԵՌՐՈՒՆԿ ՈՒ ՄՈՒԳ...

Էն ի՞նչ ամպ է՞ր,
Սարի զագաթին տալով՝
Յիր արաւ
Արծաթ տեղաց.
Արծաթ տեղաց՝
Ճերմակ-Ճակատին,
Գողէն անժրեւ գալով՝
Ծիր առաւ:

Էն ի՞նչ ամպ է՞ր
Սարի փափագին հալով՝
Սիր արաւ,
Ոսկի բեղե՞ց.
Հալուն-հլրով՝
Ոսկի-մեղաց.
Հոսուն-գրրով մըկըրտեցին՝
Քու մաճերը:

Ա՛յ, վա՛ռ նշեր
Էն ի՞նչ ամպ էր
Սարի զագաթին
Ճերմակ-Ճակատին
Արծաթ-պաշեր տալով
Յիր արաւ:

Ճերմակ-Ճակատին
Սարի փափագին,
Դարի պապակին
Շատ մարգարիտ տեղաց՝
Լար մարգերը թիւ արաւ:

Ոսուն-հրրով վառ մարգերը ծիւ արաւ
Ձառ-մարգերը՝ ոսկի-մեղաց,
Ոսկի-մեղաց լուսուն զով
Մկըրտեցին քու մաճերը:

Ձեռաւ ամառն ու ջեռաւ,
 Բերաւ կատարն ուր բերաւ,
 Ֆայտեց ցորեն
 Արտէն ծորէն:

Ճամբաներում՝
 Կեանք է եռում՝
 Դաշտէն կալեր կիզուելով,
 Հասկէն շարեր դիզուելով:

Երգ ու տաղով
 Ոսկի սայլեր ու որան,
 Հերկ ու բաղով
 Պըղինձ-բայլեր-շորորուն:

Երգ ու տաղեր՝
 Ոսկի սայլեր օրօրում,
 Հերկ ու բաղեր՝
 Պըղինձ բայլեր շորօրում:

Ի՞նչ դողդոջուն ոտեր՝
 Սըււացին որպէս խոտեր,
 Իջայ վայրիկըս:

Ի՞նչ բողբոջուն այտեր՝
 Միջօրեայ վարդ էր ցայտեր,
 Գըսայ մայրիկըս:

Գիրկը գըրկին՝ առաւ ու ղըպաւ,
 Սիրաը սըրտին՝ վառաւ ու կըպաւ՝
 Թեւեց աչելով:

Ձեռքը ձեռքին՝ առաւ ու հըպաւ,
 ձերմակ վարդեակ՝ կուրծքին ղըրաւ՝
 Լըռեց պաչելով:

Ծընո՛ւնդ կուսին,
Խա՛ջըդ ուսին՝
Հասկեր-հասկեր քաղելով՝
Անա՛ջ սրբաւերում կալեցիր.
Սընո՛ւնդ բարի,
Քա՛ջըդ արի՝
Ազգեր-ազգեր մաղելով
Կանա՛ջ հրրդեհում հալեցիր:

Մարգարտայեռ՝
Ջեր քըրախնրներ՝
Այաէդ երկին՝
Կայլակ-կայլակ հոսելով՝
Մեր մահը լացեց,
Մարեցին.
Ու անվեհեր՝
Սէր-աչիկներ՝
Փայտէն երկիր՝
Փայլակ-փայլակ խօսելով՝
Իր շահը բացեց,
Վառեցին:

Նուրբ հովի պէս լարերով՝
Սուրբ ծովի պէս պալեւով,
Սէրըդ սրբաւում պահեցիր,
Սըրտիս խորքում գահեցիր:
Աշունն եկաւ ծառին սարին հեւելով՝
Անծրեւ թելեր փոշի-փոշի թեւելով.
Պըտուկը ճոխ՝ առին տարին
Տերեւները կանաչ-ճանաչ պեղելով:

Քեզ չը սիրե՞լ,
Գեհեն կորեւ
Ու կըրակով հոգին փորել:
— Քեզի սիրել՝
Դըրախտ երթալ
Ու վարդերով քըննալ:

Ջ Մ Ե Ռ Ն Ա Մ ՈՒ Տ

Երբ երկիրը պատեց
Վերմակ վերմակ ու թեթեւիկ-թեթեւիկ,

Ճերմակ-ճերմակ ու թիթեռնիկ-թիթեռնիկ,
Զիւնիկն իջաւ արծաթ երկընքով,
Եւ երկիրը պատեց:

Վերմակ-վերմակ ու թեթեւիկ-թեթեւիկ,
Հողիկը շիջաւ ոսկի երկունքով,
Եւ աչուկները փակեց:

Արգանդ-արգանդ ու դարաւանդ-դարաւանդ,
Զըրիկը պառկեց հողի զըրկին,
Եւ ըստինքը սառեց:

Մարմանդ-մարմանդ ու աղամանդ-աղամանդ
Արեւը զարկեց պաղի սըրտին,
Եւ աստղուկները շարեց:

Շ ՈՒ Շ Ա Ն Ս Ի Ր Տ

Շուշան սիրարդ մարառեց տարի-տարի
Կեանքիդ արեւ-օրերում.
Սուսուն-սէրը թափառեց արի-արի
Լանջիդ լուսին ծորերում:

Շըրթունքներդ մանուշակ դալար-դալար
Սիրոյ զարուն զովանի,
Գանգուր հերըդ անուշակ գալար-գալար
Համրոյրներուն հովանի:

Սէրըդ սէր էր ծագեցաւ
Պատոյտ-պատոյտ դափնիների ճիւղերով,
Սիրտըդ սիրտ էր յագեցաւ
Կապոյտ-կապոյտ րալսանի իւղերով:

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Հոգիս թիթեռ

Մի վայր մի վեր

Յոյս ծովերով թևեւում

Հոգիս մի բեռ

Անմայր անսէր,

Լոյս հովերով հեւելով...:

Ա Ղ Ե Ր Ս

Կա'ց, Տէ'ր, Տէ'ր իմ,

Բա'ց, Տէ'ր, սէ'ր իմ.

Զարկին դեւեր

Իմ թեւեր.

Տո'ւր, Տէր,

Հո'ւր Տէր

Որպէս խոտեր

Էլ չը դողան

Իմ ոստեր...:

Բ Ա Ղ Զ Ա Ն Ք

Զայնիկ ունիմ՝ հայուն-մայուն,

Սրբաիդ բունեմ կայուն-մայուն.

Ո'վ իմ թեւիկ,

Տո'ւր իմ հեւիկ

Թըռչեմ երթամ...:

Կ Ի Ն Ն Ո Ւ Ա Յ Ր

Առան ասեղ ու ճերմակ թել

Եւ ըսկըսան հիւսել...

Առան երկաթ, կրրակ ու յաղթ՝

Կեանքը հեաան՝ տեսան քու բաղդ...:

Պապիկ ծառն էլ
 ձերմակ ծոցիկով
 Զրրիկ բոցիկով
 Խորունկն է խառնել,
 Բազուկն է առել
 Քարերին դառել
 Հոսում է խօսում
 Ափիկ-ափիկ սըղոցում:
 Երկար բարունով
 Դալար արունով
 Սարին բրբելով,
 Քարին գ բելով.
 Դաղձն է ձուլնել
 Փափուկ դափերին,
 Մ'աղձն է բուլնել
 Սըրտիդ ծափերին:

Կանաչ դաշտի կուրծքը պայթեցաւ
 Գոգին հըսկայ ժայռը փայթեցաւ.
 Ճայթեցաւ ու ծառացաւ
 Ծառացաւ ու տեղում քարացաւ:

Կապոյտ երկնի ծոցը ծովացաւ,
 Կարմիր երկրի բոցը հոգացաւ.
 Ծովացաւ ու ծաւալեց,
 Ծաւալեց ու հողմով թաւալեց.

Բոց-մոց՝ կարմիր երկիր հեղանալով,
 Ծոց-ծոց կապոյտ երկիր ծողանալով՝
 Ծողանալով ու դողով ծաւալելով
 Ծաւալելով ու չորս կողմ թաւալելով՝

Հողմը ծառացաւ ու բոցը հանգաւ....:

Ես քու սէրն եմ,
Սիրուտ ջերն եմ,
Մենաւոր.

Ես եմ քո կին
Դու՝ իմ հոգին
Յենաւոր:

Ձայնըդ հընչեց սիրոյ կայծակ շեշտակի,
Հոգիւր շընչեց զարուն-փայլակ հեշտակի:

Շունչըդ առայ կուռ ծոցերով՝
Գըրիչ դառայ հուր բոցերով:

Փ Ե Ա Ի Բ Մ Ը

Մտի՛ր խորը,
Գըտի՛ր՝ նորը.
Վանէ՛ հինը
Բանէ՛ մինը:

1

Դարուն ցելաւ ծաղկունիկ բոցերով,
Ամառն ելաւ հասկունիկ ծոցերով.
Աշունն առաւ խատուտիկ բարերով,
Ձմեռ պատաւ՝ պատու տիկ սառերով:

2

Ելաւ տերեւ՝ երեւ երեւ կանաչ ծովանի.
Տարփուն-տարփուն կապոյտ հովանի.
Ժըպիտ քողով սրբտիկ հովին ծըռած,
Ծըպիտ դողով սրբիկ քովին դըրած:

3

Ելաւ շինական՝ ցանեց առաւ՝
Բուռը լի-ցորեն.
Անցաւ դաշտէն ու ձորէն
Բարձաւ տասը լիր ցորեն:

Կարմիր ցայգով՝ մանուշակ երկին նաւեցիր.
 Կանաչ այգով անուշակ հերկին բաւեցիր.
 Խաղող-ցօղը՝ շողն էլ վրան՝
 Քաղով-դողով՝ ծողն էլ վրան:

Հըրաբարձ լեռներ՝ կոնելով՝
 Նարգիզ դալարսն դիզել.
 Սողուն կողեր շոգելով՝
 Ոսկին արծաթ շիթել:

Այն ի՞նչ ամպ էր՝ աղօտ-աղօտ ծռուեցաւ,
 Ու թուխ պատեց կապուտեց.
 Այն սեւ ամպ էր՝ մաղօտ-մաղօտ ցրուեցաւ,
 Ու պուխ կապեց պատուտեց:

Սէրըտ անմիտ սըրով բոցոտեցին,
 Բեռըտ խաւար հըրով խոցոտեցին.
 Երկրիտ հողէն խաչը՝ բուսաւ,
 Կեանքիդ կողէն աչը՝ հիւսաւ:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	Թ. Ազատեան	Էջ
Մայրիկիս Օրօրը		17
Կեանք		22
Կոյրը		23
Ճերմակ Հեր, Դարուն Սէր		24
Հով ու ծով Սէր		25
Դիտակ		26
Դարուն		27
Նոճիներն Ու Մայրիներ		28
Աշուն Կեանք		29
Մայայտակն Ու Ուղին		30
Մենաւոր		31
Իմ Երագում		32
Սիրահակ		32
Աշուն Օր		33
Աստուած Իմ		35
Ծաղիկն Ու Շաղիկ		36
Օրհնութիւն		37
Թերթիկն Ու Յողիկ		37
Սէր-Հովիկ		38
Քո Երագում		39
Աշուն		40
Իբր Զարդ		40
Աշուն Դիշեր		41
Երկնի Կայծեր		42
Սար Ու Քար		42
Վարդիկս		43
Ճանապարհ		44
Ծովակ, Նաւակ		44

Սէր Ու Զեր	45
Առաջ	46
Սէր Ու Բեր	47
Ոսկի Մեղաց	48
Բուսաբարեւ	49
Ուռի Յող	51
Ի՞նչ	52
Եւ Ու Սէր	53
Խորունկ Ու Մուգ	54
Հունձք	56
Գորով-Սէր	57
Խաչեալին	58
Հով-Սէր	59
Անմար Սէր	59
Զմեռնամուտ	60
Շուշան Սիրտ	61
Պատրանք	62
Ազերս	62
Բաղձանք	63
Կինն Ու Այր	63
Հոսուն-Խօսուն	64
Կարմիր Բոց	65
Ես Եմ	66
Փշուր Մը	66
Անշատ Քառեակներ	67



«ՄՇԱԿՈՅԹ» Հրատարակչականը լոյս ընծայած է

1. ՈՍԿԻ ԱՐԻՇԻՆ ՏԱԿ (Արճակ երկեր) Մ. Մեծարենցի.
1934, Կ. Պ իս, էջ 182 Դր2. 100
2. ԶՄՐՈՒԹՏԷ ՓԱՏՄՈՒՃԱՆ (Ուղեւորութիւններ, զիւղա-
կան պատկերներ եւ արձակ քերթուածներ), Թ. Ա-
զատեան, 1936, Իսթանպուլ, էջ 191 100
3. ԱՐՈՒՂԱԼԱ ՄԱՀԱՐԻ (Ե. տպագր.) Ա. Իսահակեան,
1936, Իսթանպուլ, էջ 32 25
4. ՅՈՒՅԱԿ Հայ Պարբերականներու, Օրաթերթերու եւ
Տարեցոյցներու, 1936, Իսթանպուլ (սպառած)
5. ՊԱՂՏԱՏԻ ԿԱՐԱԽԱՆԸ (Ա. հատոր), Ե. Շահնազար,
1937, Իսթանպուլ, էջ 327 100
6. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՄՔԵՐ.— Զ. եւ Հ. Ասատուր, 1937,
Իսթանպուլ, էջ 80 50
7. ՀԱՅ ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ (Պատմական հետազոտութիւն-
ներ), Իսթանպուլ, 1937, էջ 91 100
8. ԱՐՄԱՂԱՆ (Թուրքիոյ Հանրապետութեան 15 ամեակին
առթիւ), Մ. Գօջունեան եւ Թ. Ազատեան, Իսթան-
պուլ, 1938, էջ 80 100
9. ԱՆՏՔԵՐ ՈՒ ԱՆՁԵՐ, Յովհաննէս Ս. Ալիքսանեան, Իս-
թանպուլ, 1939, էջ 317 100
10. ՔԱՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ Կոմիտաս Վարդապետի, Իս-
թանպուլ, 1939, էջ 68 50

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԵՐԿԵՐ

1. ՈՐՈՇԴԷՍԻ ԱՍՏՈՒԱԾԸ (Ուղեւորական էջեր):
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Գեղամ Թէրզեանի:
3. ՔԱՍԻՄ (Իր կեանքը եւ իր զործը):



NL0345490

36383

ՏՐԵՄԵՐԵԿՈՒԹԻՒՆ “ԿՈՄԻՏԵԱՅ ԵՐ., ՈՒՔՆ
ՊՈԼՍՈՑ ՅԵՆՋՆԵՐՈՒՄԻ

Թ. ԱԶԵՐԵԱՆ



ԼԵՔԷՐԻՆ ՏԵՐՈՐ

ԻՐ ԿՈՔՆ ԸՆ

ՈՒ

ԳՐԹՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆ՝ 100 դՐՈՒՇ

ԲՈՒՇԷ ԲՈՒՂՐԻ ՎՐԱՅ՝ 200 դՐՈՒՇ

Սակաւաթիւ օրինակներ մնացած են Կոմիտաս Վարդապետի
կեանքն ու երաժշտական գործունէութիւնը պատկերացնող
այս երկասիրութենէն, որուն միակ կեդրոնաստեղին է

« Մ Շ Ա Կ Ո Յ Թ » ԳՐԱՏՈՒՆՔ

Պիլլօր Սօքաք, Կիւլ Խան, Թ. 8-9

Կալաթա-Իսթանբուլ